

ՏԱՄՆ ԵՒ ՎԵՏԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ: Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакция «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսութիւն. Նոյա կայսերական Մեծութիւնները Թիֆլիսում. Նոյա Մեծութիւնների ճանապարհորդութիւնը. Ներքին լուրեր.— ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ԲՕՐՍՍ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նշանածը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՏԱ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Արտասովոր կենդանութիւն է տիրում մի քանի օրից ի վեր կովկասեան մայրաքաղաքում—Թիֆլիսում: Քաղաքը հանդիսաւոր կերպարանք է առնել. փողոցները, հրապարակները և աները զարդարված են դրօշակներով, զոյնդրոյն զօրգորով և ծաղիկներով: Միջոցներով և Գլորիոյայա փողոցները կատարելապէս խորատուղված էին դրօշակների և ծաղիկների կամարների մէջ: Քաղաքի մի քանի տեղերում շինված էին յաղթական կամարներ, որոնցից մէկը երկաթուղու կայարանից ոչ հեռու, միւսը աղնակամարների ժողովարանի դիմաց, մէկ ուրիշ Գլորիոյայա փողոցի սկզբին, մէկն էլ Միջին-փողոցի զլիսին. վերջին կամարի վրա դրած էր հետեւել խօսքերը. «СТАРИЙ ГОРОДЪ ОБЕДЪ ЧЕЛОМЪ»,—478 թւանշանով—որը Թիֆլիսի հինարկութեան տարեթիւն է: Գլորիոյայայի պրօպագանդիստ և երեսնեան հրապարակի վրա մի քանի տներ և հիւրանոցներ իրանց շքեղ զարդարանքով զբաւում էին ամենքի ուշադրութիւնը: Շքեղ էր զարդարված և Անդրկովկասեան երկաթուղու Թիֆլիսի կայարանը: Խորատուղված լինելով համարեա ամբողջապէս ծաղիկների, ծաղկափնջերի ու դրօշակների մէջ: Քաղաքի արդարանկութիւնը և իշխանութեան ներկայացուցչները սեպտեմբերի 28-ին վաղ ա-

ռաւօտից ստի վրա էին. դեռ նոր արեւ ծագած մեծ հասանք էր սկսվել դէպի երկաթուղու կայարանը, ուր ժամը 10-ին ամենքը սպասում էին Նոյա կայսերական Մեծութիւնների զայտեսանը: Առաջ ենք բերում Բարձրագոյն Հիւրերի զայտեսան մանրամասնութիւնները, քաղելով ռուս պաշտօնակաւ «Кавказъ» և «Новое Обозрѣніе» լրագիրներից: Կայարանում տեղադրված էին Թիֆլիսի նահանգի աղնակամարներից պատուաւոր պահակախումբը, ազգային զեղեցիկ շորեր հագած, քաղաքային ձայնաւորները՝ քաղաքապետի Մատիւնովի հետ միասին, աղնակամարների նահանգական պարագլուխ իշխան Բարդախովսկի-Մուխրանսկի, աղնակամարների գաւառական պարագլուխներին հետ, բարձր զինուորականներ և տեղական իշխանութեան ներկայացուցիչները: Ժամը 10-ին հասաւ կայսերական գնացքը, որին տեսնելուն պէս կարողով կանգնած համբարները և ցանկապատի յետը գտնվող ժողովուրդը ողջ թնդացրեց «ուրա» զօգելով: Գնացքը կանգնեց: Ամենից առաջ վազօնից բարեհաճեց զուրուղայ Թագաւոր կայսրը, ապա Թագուհի կայսրուհին, Թագաժառանգը, և Մեծ իշխան Գեօրգի Ալեքսանդրովիչը. զրանից յետոյ զուրա եկան կովկասեան կառավարչապետ իշխան Գոնդուկով, Կորսակով, պալատի մինիստր Վորոնցով-Գաշկով, զինուորական մինիստր Վանուկովի, և ուրիշ բարձրաստիճան անձինք: Նոյա Մեծութիւնները ողջոյն ընդունեցին զինուորականներից, աղնակամարներից և քաղաքից: Աղնակամարների կողմից իշխան Մուխրանսկի ներկայացնելով աղնակաց, մի քանի ջերմ խօսք ասեց: Թագաւոր կայսրը ընդունեց աղնակացը, և բաղդաւորեցնելով իշխան Մուխրանսկուհի ձեռք տալով ասեց. «Շնորհակալ եմ, իշխան, ես շատ ուրախ եմ որ ինձ, վերջապէս, աշխույժ գալ կովկաս»: Գրանից յետոյ Թագաւոր կայսրը դարձաւ քաղաքի ներկայացուցչներին՝ Քաղաքապետի Մատիւնովի աղտուսաց ներկայացնելով՝ դիմեց Նոյա Մեծութիւններին մի կտրած, բայց ողբերկած ձառով:

Թագաւոր կայսրը աղ ու հացը ընդունելով ամեն նաողորմածաբար երկու անգամ ասեց. «Շնորհակալ եմ»: Այդ խօսքերից յաջորդեց ձայնաւորների և ժողովուրդի միաձայն «ուրան»: Երկաթուղու կայարանի դահլիճում Թիֆլիսի տիկիները ողջունեցին Նոյա Մեծութիւններին: Կառավարչապետի օգնական գեներալ-ադյուտանտ Շերեմետեւիի ամուսինը, Թիֆլիսի դատաստանական պալատի աւագ-նախագահ Գոնչարովի ամուսինը և Թիֆլիսի քաղաքապետի Մատիւնովի ամուսինը ներկայացրին Թագուհի-կայսրուհուն զեղեցիկ փնջեր: Ապա Նոյա կայսերական Մեծութիւնները մտան քաղաք, բաց կառքով. Նոյա Մեծութիւնների անցնելու ճանապարհի երկու կողմերում կանգնած էին զօրը և մեծ բաղմոթիւն. պատշաճ զամբները, պատուհանները և կտուրները լի էին ամեն տեսակ բաղմոթեամբ: Բէյալական զարդի մօտից սկսած կանգնած էին զինուորական զբոսայրոցների աշակերտները իսկ կամուրջից սկսած, ամբողջ Ղորխ-Մէլիքեան փողոցով, և Միջին-փողոցը կանգնած էին քաղաքի զարդական հիւնարկութիւնների սաները. այստեղ էին արհեստաւորաց, քաղաքային զարդաների աշակերտները, արական և իրական գինեագիւղի աշակերտները և աշակերտուհիները, ինտիմուտի աշակերտուհիները, Ներսիսեան զարդի աշակերտները, Յովնանեան և Գայանեան զարդի աշակերտուհիները և հոգևոր սեմինարիայի աշակերտները: Նոյա կայսերական Մեծութիւնների փողոցներով անցնելու ահազին բաղմոթիւնը զօրում էր «ուրա», որին Նոյա Մեծութիւնները պատասխանում էին սիրալիբ ողջոյնով: Անցնելով Երեսնեան հրապարակից, Նոյա Մեծութիւնները մտան Միջին-փողոց, որտեղ արհեստաւորները, տեղական հազարաւորներով, բռնել էին փողոցի երկու կողմը: 10 1/2-ին Թագաւորական գնացքը հասաւ Միջին-փողոցի վերջին կայարանը, որտեղ արհեստաւորները, շրջապատված ուղղափառ հոգե-

ւորականութեամբ, դիմեց Նոյա Մեծութիւններին մի-ողեւորված ձառով: Հառը լսելուց յետոյ, Նոյա Մեծութիւնները բարեհաճեցին, բարձրաստիճան անձինքների հետ միասին, մտնել տաճարը, ուր գտնվում էին արդէն Թիֆլիսի քաղաքացիական վարչութիւնների ներկայացուցչները: Տեղի ունեցաւ մաղթանք: 10 1/2-ին Նոյա Մեծութիւնները զուրա եկան տաճարից և նոյն փողոցով դարձան դէպի պալատը: Գլորիոյայա փողոցի վրա, Գամայնից եկեղեցու մօտ, ինչպէս և Թանդոյեան եկեղեցու մօտ, Միջոցայեան փողոցի վրա, Նոյա կայսերական Մեծութիւններին դիմաւորեց հայոց հոգևորականութիւնը: Թագաւոր կայսրը զլիարկը վերցրեց, և Թագուհու կայսրուհու հետ միասին երեսները խաչակնքեցին: Պալատի դրան մօտ Նոյա Մեծութիւնները իջան կառքից: Այստեղ կանգնած էր պատուաւոր պահակաւորը մուգիկայով. հարկաւոր զինուորական արարողութիւնները կատարելով Թագաւոր կայսրը, Թագուհի կայսրուհին, Թագաժառանգը և Մեծ իշխան Գեօրգի Ալեքսանդրովիչը մտան պալատը: Նախաճաշից յետոյ, ժամը 3 1/2-ին տեղի ունեցաւ Բարձրագոյն ելք, որից առաջ Նոյա կայսերական Մեծութիւններին առանձին ունկնդրութեան արժանացան: Պարտից շահի լիազօր ներկայացուցիչը, պրինց Հէսասու-Սալթանէ, որը տալով Թագաւոր կայսրին Շահի նամակը, մի կարճ և ոգևորված ձառ. ասաց և ամենայն հայոց Վեհափառ Մակար կաթողիկոսը: Բարձրագոյն ելքի ժամանակ Նոյա կայսերական Մեծութիւններին ներկայացան քաղաքացիական բարձր աստիճանաւորները, ուղղափառ հոգևորականութիւնը, հայ-լուսաւորական, բողոքական և կաթողիկ հոգևորականութիւնը, շէյխ-ու-լ-իսլամը, օտար պետութիւնների հիւպատոսները, աղնակամարների նահանգական և գաւառական պարագլուխները, և Գանձակի ու Երեսնի նահանգի պատգամաւորութիւնները: Երեսնի և Գանձակի պատգամաւորութիւնները ներկայացրին Նոյա Մեծու-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՆՇԱՆԱԾԸ

III

Շիրազեանին աջողից մեղմացնել օր. Վարդուհու ծնողներին և այդպիսով հանեց նրան այն ծանր դրութիւնից, որը մաշտած, հալում էր նրան: Խեղճ օրիորդը դեռ չէր մտապցել այս վիշտը, որ պատճառել էին նրա ծնողները, երբ մի նոր վիշտ վրդովեց նրա կանացի զվարագաց սիրտը: Գրա պատճառը կրկին Պատրիկեանն էր: Նա միշտ նամակներում գանգատվում էր իր վիճակից, գրելով թէ ծնողները չեն կարողանում նրան նիւթապէս օգնել, ինչպէս հարկն է և ինքը նեղութեամբ է կարողանում շարունակել իր ուսումը: Այդ բանը քիչ ցաւ չէր պատճառում օր. Վարդուհուն: Բայց Պատրիկեանի վերջին նամակը բոլորովին վանեց օրիորդի հանգստութիւնը և սարսափելի վրդովմունքի մէջ ձգեց նրան: Պատրիկեանը գրում էր՝ «Ծնողներս վերջին ամսական ուղարկելով գրում են, որ այլ ևս անկարող են ինձ օգնել, որովհետև ոչինչ չունեն, այս էլ տան մի քանի իրեղենները ծախելով են ուղարկել: Այս նամակը լի էր յուսահատական մտքերով, որոնց իւրաքանչիւրը օր. Վարդուհու համար մի մի սուր պաշտներ էին, որոնք, ցցվելով նրա սրտի մէջ, անտանելի ցաւ էին պատճառում նրան: —Ինչ անեմ, ինչպէս աղատեմ նրան քաղցից ու ամօթից—անհայն մտքերը, որոնք գիշեր-ցիտ էին հանդիստ չէին տալիս խեղճ օրիորդին: Նա

գիշերները իր ննջարանի պատուհանի առաջ նստած տխուր ու տրտում մտածում էր իր սիրելի երուսնի վրա: —Ինչ է նա անում այժմ, ինչ դրութեան մէջ է—անհարցելի, որոնք վրդովում էին նրա սիրտը: Բորբոքված երևակայութիւնը հազար ու մի տեսակ պատկերներ էր ներկայացնում նրան, մի-նր քան միւսը տխուր և անսիրտ երեքնն երևում էր նրան, թէ երուսնը հիւանդ ու տկար պառկած է անկողնում և չի կայ մէկը նրա կողքին, որ նրա մասին հոգ տանէ, որ նրան սիրտէ երբեմն թվում էր, թէ նա քաղցած նստած է գրքերի առաջ և բարկութիւնից կրճում է իր եղբայրները, որովհետև կօպէկ չունէ, որ յազնցնէ իր անզուպ քաղցը. երբեմն երևում էր նրան երուսնը պատառոտած շորերով համալսարանում նստած. երբեմն թվում էր, թէ նա մեռած է և ոչ ոք չի կայ նրան թաղող, երբեմն էլ դալիս էր նրա առաջ մի զուղելի, մի զարհուրելի տեսարան. —նա տեսնում էր իր երուսնին մի հարուստ այրիի առաջ սիրոյ պրանքներ թափելիս... —Ո՛հ, պատիւր երևակայութիւն, միթէ կարող է այդ պատահել: Միթէ երուսնը մի կտոր հացի համար կը զոհէ իր Վարդուհուն, կը ծախէ իր սէրը, իր ամենանուրը և սուրբ զգացմունքը, իր ամենաթանկագին ստացուածքը: Ո՛չ, ո՛չ, դա պատրանք է, դա բորբոքված երևակայութեան արտագրութիւն է: Մի ամբողջ շաբաթ Վարդուհին հայվում ու մաշվում էր, չի կարողանալով մի միջոց գտնել Պատրիկեանին օգնութիւն հասցնելու համար իր ծնողներին դիմել նշանածին օգնելու համար նա անկարող էր: Ապա նուր դիմել, ապա ինչով ապահովել իր սիրելի կեցութիւնը.—եւլը չի կարող վերջապէս Վարդուհին իր այդ ցաւը յայտնեց օր. Նուբարեանին, որը նրա ամենարտակից ըն-

կերպի էր և որից նա ոչինչ չէր թաղցնում: Նա շատ անգամ էր հանել նրան անկանելի դրութիւնից, զօրեց այժմ էլ մի ճար գտնէր նրա ցաւին դարման անելու համար: Յիբախի ճարը շուտով գտնվեցաւ: Օր. Նուբարեանը իր կողմից յայտնեց Վարդուհու դրութիւնը Շիրազեանին, որին հետ այն օրից, երբ ներկայացաւ նրան օր. Վարդուհու ինչիւրը յայտնելու, շատ մտերմացել էր: Շիրազեանը առանց մտածելու յայտնեց իր պատգամաւորութիւնը Վարդուհուն օգնելու և առաջարկեց նրան մի ընտանիքում պարագլուխ, երեսնաների հետ ամսական 25 ռ. վարձարութիւնով: Օր. Վարդուհու ուրախութեամբ սահման չը կար Նա առանց ծնողներին յայտնելու ընդունեց այդ դարը և այդպիսով սկսեց օգնել Պատրիկեանին: Մի քանի տարի շարունակ նա անխնայ կերպով աշխատելով օգնում էր Պատրիկեանին և զօհ էր վիճակից, որովհետև այդ տեսակ աշխատութեան մէջ զօնէ գտնում էր այն բարոյական հանգստութիւնը, որից նա դուրկ էր իրանց տան մէջ: Ամեն ինչ այդ ժամանակամիջոցում լաւ էր գնում: Պատրիկեանը նիւթականի կողմից ապահովվելով չէր զանգատվում իր վիճակից, իսկ իրան էլ ծնողները հանգիստ էին թողել, այլ ևս նոր փորձեր չանելով նրան Պատրիկեանից հրաժարեցնելու համար: Նրանք ժամանակի և հանգամանքների հոսանքին էին թողել օր. Վարդուհուն խելքի բերելը: Մի տարի էր մնացել մինչև Պատրիկեանի ուսման աւարտելը: Օր. Վարդուհու վառ երևակայութիւնը արդէն սկսել էր ներկայացնել նրան այն մտայն կերպով օրերը, որոնք պիտի յաջորդէին այն ծանր և տանջալից օրերին, որոնց նա տարել էր ամբողջ տարիներ: Մի տարի ևս, —և պիտի կատարվէին նրա ցնորքները, պիտի իրագործվէին այն գեղեցիկ նախագծերը, որոնց նա

զօն էր գիշերները միայնակութեան մէջ: Այս մի տարի ևս Վարդուհին երևակայում էր իրան ամենաներշնչիկ արարածներէն մէկը, բայց տարբաբաբար իրերի դրութիւնը անակնկալ կերպով փոխվեցաւ և օրիորդ Վարդուհու համար կրկին վերադարձան նրա նշանաբանութեան առաջին ժամանակները: Օր. Վարդուհու քոյր Վարվարէն մի հարուստ պարոնի ամուսին էր: Այդ պարոնը քառասունից անց, հիւանդութիւններով վարակված մի մարդ էր: Նա, հիւանդութիւններից ազատվելու համար ամբողջ երկու տարվայ միջոցում ոտքի տակ տըւեց Եւրօպայի բոլոր հանքային ջրերը իր երկտասարդ և ջրնաղ կնոջ հետ: Տարբաբաբար ոչինչ և ոչ ոք չը կարողացաւ վերանորոգել նրա քայքայված մարմինը և նա ամբարային մի գեղեցիկ երեկոյ, երբ Վարվարէն հայելու առաջ պատկերում էր բժշկին ընդունելու,—մարդը առանդեց իր հոգին, թողնելով իր շահիլ, գեղեցիկ և սիրոյ կարօտ կնոջը միայնակ... Այրի Վարվարէն այս տխուր դէպքից յետոյ Եւրօպայի մի քանի իր չը տեսած, քաղաքներ էր այցելելուց յետոյ, շուտով վերադարձաւ Թիֆլիս իր ծնողներին մօտ: Եւ անհայր օրվանից Վարդուհու համար սկսվեց մի անտանելի կեանք... Տիկին Վարվարէն այն թիթի կանանց դասին էր պատկանում, որոնք ֆրանսերէն խօսելը քաղաքակրթութեան նշան են համարում, իսկ եւրօպական ամեն մի յարմար կարգ ու կանոններին հետեւելը լուսաւորութեան միակ նշան: Նա իր եկած օրից սկսեց իրանց տունը շքեղապէս ձևի դարձնել: Մինչև անգամ ընտանեկան և բարեկամական պարզ յարաբերութիւններն էլ դանազան քաղաքակրթական օրէնքներով ծանրաբեռնեց: Պարզ է, որ Վարդուհին էլ աղատ չը մնաց իր քաղաքակրթված քոյրը նոր կանոնադրութիւն-

Թիւններին աղ ու հաց: Նոյա Մեծութիւնները բարեկարգութեամբ պատրաստուած են և ներկայացուցիչներին շատերին իրանց խօսակցութեամբ, որոնք արժանացան համարակալութեամբ: Այս պատճառով Նոյա մնաց բարեաւ ասելով ընտրելին, Նոյա կայսերական Մեծութիւնները դուրս եկան ընդունելութեան դահլիճից, և պատգամաւորները ցրվեցան 3 ժամ 35 րոպէս:

Նոյն օրը, ամբողջ ժամանակ պալատի առաջ կանգնած էր անազին բազմութիւն: Իսկ երեկոյան քաղաքը փառաբանութեամբ լուսաւորված էր:

Քաղաքը ներկայացնում էր սքանչելի տեսարան. գոյնզգոյն լապտերները և ճրագները, որոնցով զարդարված էին շատ տներ և մեծ փողոցները, գրասէլ էին անազին բազմութիւն, որը երեկոյան ժամերին, սկսած ժամը 6-ից մինչև կէս գիշեր զբոսնում էր Գիտօրոյական փողոցի վրա և պալատի դիմաց: Սեպտեմբերի 29-ին, թիֆլիս ժամանելու երկրորդ օրը, առաւօտեան 10 1/2 ժամին Նոյա Մեծութիւնները, թագաժառանգութեան և Մեծ Իշխան Գեորգի Ալեքսանդրովիչի հետ զննարկի գործառնող կատարելու Մուշտաիլի աղբու մօտ գտնվող Գիտօրոյական փողոցի վրա: Նորին կայսերական Մեծութիւնը ձեռքով իսկ թագուհի կայսրուհին կառքով շրջագայեցին զօրքը: Այդտեղ էին ի միջի այլոց իշխան-կառավարչապետը և պարսից Շահի լիազօր ներկայացուցիչ Կասաբուս-Սալիմանէ: Զօրահանդիսի ժամանակ թագուհի կայսրուհին իր նիւթիներին հետ միասին տեղափոխեց այդ նպատակով շինած պալիլիօնում: Զօրքը և նորա զլիաւորները արժանացան թագաւոր կայսրի «չնորհալուծութեան»: Ժամը 11-ին Նոյա Մեծութիւնները վերադարձան, և ժամը 11 1/2-ին բարեհաճեցին այցելել I արական դիմնազինան, ուր խմբված էին արական միջնակարգ դպրոցների աշակերտները: Գիտնադիտքի դահլիճում աշակերտական նուազախումբը նուազեց, որից յետոյ Նոյա Մեծութիւնների առաջ գլխավոր դերակատար ՎIII դասատան աշակերտ Երիտով և VII դասատան աշակերտ Գիտիլէ կարդացին իրանց գրած երկու ոտանաւորները, և ապա Նոյա Մեծութիւնները դուրս գնացին գիտնադիտքից, որի ժամանակ օրը թնշաջ «ուրայի» աղաղակներով:

Գիտնադիտքից յետոյ Օրոտտափառ Հիւրերը այցելեցին անգրովկասեան օրիորդական ինստիտուտը: Փառաւոր զարդարած դահլիճում աշակերտուհիները մի քանիսը նուազեցին դաշնամուրի վերա, երգչեցին և կարդացին Կրիլովի առակները: Աշակերտուհիները բազմ ունեցան ներկայացնելու Նոյա Մեծութիւններին իրանց սեփական ձեռագործները: Ինստիտուտի վերին յարկին էլ տեսնելուց յետոյ Նոյա Մեծութիւնները վերա-

դարձան պալատը, ուր 12 1/2 ժամին պատրաստված էր Բարձրագոյն նախաճաշիկ:

Ժամը 2 1/2-ին Նոյա կայսերական Մեծութիւնները ժամանելով օրիորդական ինստիտուտի նոր շինութեան տեղը, ներկայութեամբ վրաստանի էկզարխի, բարձրաստիճան անձինքների, քաղաքապետի և անազին բազմութեան զրեցին ինստիտուտի նոր շինութեան հիմքը: Մաղթանքից յետոյ, Նոյա Մեծութիւնները հիմքի քարերը մէկի մէջ շինած փորձաճիւղի մէջ զրեցին ոսկէ և սուրճաթի դրամներ, որի վրայից տեղափոխեցաւ օրհնագոծ մտապահան տախտակ պատշաճաւոր արձանագրութեամբ: Երբ այդ տախտակը տեղափոխեցաւ իր տեղում, թագաւոր կայսրը զրեց առաջին մարմարիօտի քարը՝ խփելով նրան երեք անգամ յատուկ պատրաստած մուրճով, երկրորդ քարը զրեց թագուհի-կայսրուհին, ապա թագաժառանգը և յետոյ միւս բարձրաստիճան անձինքը: Ինստիտուտի ապագայ շինութիւնը շատ մեծ կը լինի և շինվելու է վրաց-հայկական ճարտարագիտութեան ոճով: Եթայն օրոշված է 400,000 ռուբլի: Հիմնարկութիւնը վերջնապէս յետոյ Նոյա Մեծութիւնները ոտով գնացին Ս. Նունէի օրիորդական դպրոցը: Այդտեղ այցելեցին դասատուները և տեսան զբարձրաստիճան ներկայացուցիչ Նոյա Մեծութիւններին իրանց ձեռագործները: Այդտեղից, աշակերտուհիների «ուրայի» ձայներով Նոյա Մեծութիւնները դուրս գնացին և ոտով ուղևորվեցան Ալեքսանդր II անուան շինված ապաստարանը, ուր Նոյա զինուորացի ապաստարանի վարչութիւնը Նոյա Մեծութիւններին այնտեղ էլ ներկայացրին զանազան ընծաներ՝ սեփական ձեռագործները: Տեսնելով դասարանները և նշարանները Նոյա կայսերական Մեծութիւնները ապաստարանից կառքերով վերադարձան պալատը:

Նոյն օրը կէսօրից յետոյ ժամը 4 1/2-ին պալատում Նորին կայսերական Մեծութիւն թագուհի-կայսրուհին ընդունեց տիկիններին:

Սեպտեմբերի 29-ին էլ երեկոյան քաղաքը փառաբանութեամբ լուսաւորված էր. պալատի մօտիկ փողոցներում, մանաւանդ աղնակալանների ժողովարանի առաջ խմբված էր անազին ժողովուրդ: Այդ երեկոյան անաւակներին ժողովարանում տեղի ունեցաւ փառաւոր պարահանդէս, աղնակալանների նախաճաշութեամբ:

**ՆՈՅԱ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԶԱՆԱՊԱՐՆՈՐԿՈՒԹԻՒՆԸ**

«Հիւսիսային գործակալութիւնը» հասցրել է մեզ Պետերբուրգից հետեւեալ հեռագրերը Օրոտտափար Անձանց ճանապարհորդութեան մասին:

—Հըրը... Գեռ շատ տղայաժող էս: Մի՞թէ դու հաւատում ես ջո սասձին, և կարծում ես, թէ դու կարող ես մի տղիւր ուսանողի նշանածը լինել, արհամարհանելով ասեց տիկին Վարվարէն և կրկին շարունակեց ամեն ինչ իր կանոններին: Երբ տիկինը, առանց ուշադրութիւն դարձնելու թէ Վարվարէն և թէ ուրիշները տրտուճանքի են: Երբ կարծիքով դրանք բոլորն էլ իրանից ցած էին և անարժան իր բարեկիրթ ուշադրութիւններին:

**IV**

Վարվարէն հին ծանօթները, տիկին Վարվարէնի զաւրուց յետոյ, միայն Շիրազեան արդատ մուտք ունէր նրանց տուն: Ամեն երեկոյթի կամ ճաշիկի ընթացքում զրեւած ժամանակ անպատճառ հրաւիրված էր լինում և Շիրազեան Նա արժանացել էր տիկինը ուշադրութեամբ և այդ բոլորին դարձնում էր ի հարկէ ոչ ըզին յայտնի չէր դրա պատճառը, միայն բոլորին, բացի Շիրազեանից, նկատելի և զգալի էր, որ տիկին Վարվարէն իր հիւրերից աւելի զերազանուած է Շիրազեանին, որ իր ժամանակին մեծ մասը նրան է նուիրում, որ նրա հետ խօսելիս աշխատում է որքան կարելի է մօտիկ նստել, որ նրա հետ աւելի քրքրվում է: Այդ զրուցիւնը երկար շարունակվեց: Ի հարկէ այս բոլորը Շիրազեանի նման մարդու տեսլութիւնից հեշտութեամբ փախչում էր:

Մի երեկոյ նա միայնակ իր սենեակում երկապարտեան սփորիչ աշխարհ էր մտել: Գրան գանդը քաշեցին և ծառան, ներս գալով, բերեց մի տոմսակ, որով տիկին Վարվարէն խնդրում էր նրան իսկույն և եթ իր մօտ չտրոհ բերել: Ինչ պէտք է լինի, մտածեց Շիրազեան և հագնվելով իսկույն գնաց: Տիկին Վարվարէն հանդիպեց նրան զուգված և վառվառն ժպիտը երե-

Նոյա կայսերական Մեծութիւններին Նոյա-բոսնիական հանդիպելու համար, չարաթ օր, 24-ին սեպտեմբերի, գումարված էր Նոյաօրոյակի նաւահանգստում Չէրնոօթեան նաւատորմի մի մասը, տաս նաւերից բաղկացած, որոնք Օրոտտափառ Անձանց «Մօսկվա» շոգենաւի վրա անցնելու և կայսերական զրոյալը բարձրացնելու րօպէլին, ողջունեցին արձակելով թնշաջութեան րից 31 անգամ: Ապա թագաւոր կայսրը փոքրիկ շոգենաւում նստելով, անցաւ ամբողջ նաւատորմի դիմ առջև: Ամեն տեղ նաւաւորները, շոգենաւերի մէջ կանգնած «ուրայ» էին աղաղակում: Կայսրի անցնելու ժամանակ երաժշտութիւնը արձու էր աղաղակն օրհներգը: Նոյն օրվայ երեկոյան Նոյա Մեծութիւնները, թագաժառանգ Զէսարեվիչի և Մեծ Իշխան Գեորգի Ալեքսանդրովիչի հետ միասին, «Մօսկվա» շոգենաւով ամբողջ նաւատորմի ուղևորվեցան՝ ուղևորվեցան Բաթում, և ճանապարհին այցելեցին Նոր-Աֆօն վանքը, որտեղ մնացին 3 ժամ, ներկայ գտնվելով տաճարի հիմնադրութեան: Կիրակի առաւօտեան, Նոյա Մեծութիւնները և Նոյա Բարձրութիւնները բարեխաջող կերպով ժամանեցին Բաթում: Բերդերի թնշաջութեան որոտը և ժողովրդի ողբերգութեամբ «ուրայ» ողջունեցին Բարձրագոյն ճանապարհորդներին: Նաւահանգստում զմաւորներին Նոյա Մեծութիւններին տեղական իշխանութիւնը, քաղաքը և շրջանների պատճառաւորութիւնները և նմանապէս օտարերկրեայ հիւանատուները: Այնուհետև Նոյա Մեծութիւնները այցելեցին ուղևորվեցան Եկեղեցին և մաղթանքից յետոյ ուղևորվեցին դէպի հրապարակը, որտեղ Նոյա Մեծութիւններին ներկայութեամբ հանդիսաւոր կերպով հիմք դրվեցաւ մայր-եկեղեցու, որը կրելու է ս. Ալեքսանդր Նէսկու անունը: Ամբողջ քաղաքը զարդարված էր դրօշակներով, գորգերով և Նոյա Մեծութիւնների վիշտներով: Նաւերը զարդարված էին նոյնպէս զրոյալներով:

Նոյն կիրակի օրը, 5 ժամին կէսօրից յետոյ, Նոյա կայսերական Մեծութիւնները, թագաժառանգ Զէսարեվիչի և Գեորգի Ալեքսանդրովիչի Մեծ Իշխանի հետ, ուղևորվեցան Բաթումից դէպի Միխայլովօ:

**ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

Ստացանք ՆՈՐ-ՆԱՍԻՋԵՒԱՆԻՑ ռուսուցուհի Գորոյեան զպրօքի, կատարինէ Աիւաշեանից 13 ռուբլի յօդուտ Բաթմի դերեզմանի վրա զրվելի արձանի: Այդ փողը հանդանակված է յիշեալ դպրոցի աշակերտուհիներին:

**ԱՐԳԱՆՆԻՑ Կ. Մ. ՏԵՐ-ՍԻՄԵՆՅԱՆՑԻ ԶՆՈՐԴՈՒՄԻՆ:**

Պետեր Նիկիտիչ, զիմելով Շիրազեանին ասեց տիկին Վարվարէն,—Թոյլ տուէք ինձ ձեզ յայտնել մի խնդրք: Ո՛հ, եթէ կատարէք, ինձ շատ պարտաւորեցրած կը լինէք:—Գիտէք, չը պատկանի Շիրազեանի պատաւանին, աւելացրեց տիկինը, այսօր աղնակալանների կրօնում ընտանեկան երեկոյ է, և ես ուզում եմ անպատճառ այնտեղ լինել: Չեղանից աւելի լաւ կալաւէր չեմ գտնի: Գուք պէտք է դաք ինձ հետ: Շիրազեան աշխատեց հրաժարվել այդ պաշտօնից, յայտնելով որ ինքը չէ սիրում լինել այդպիսի հասարակական տեղերում, բայց վերջապէս ստիպվեցաւ խոստանալ տիկինը թախանձանքներ ռուբլի:—Նրանք գնացին: Արդէն կէս գիշեր էր: Երեկոյն աղնակալանների կրօնում դեռ շարունակվում էր, երբ Շիրազեան պատուիրեց իրանց համար սեղան բացանել: Մի քանի րօպէից յետոյ խմբիցները և համար կերակուրները իրանց աղջեցութիւն էին անում երիտասարդի և զրպաւն տիկինը գլխների վրա: Քանի գնում աւելի տաքանում էին նրանք, մանաւանդ տիկինը: Նրա ողբերգութեամբ լի խօսակցութիւնը, հրավառ աչքերը, դողողուն շրթերը և խորհրդաւոր շարժումները շատ բան կարող էին ասել մի փորձված կալաւերի, բայց Շիրազեան կարծես ոչինչ չը հասկացաւ: Տիկինը համարեց իր կարծես հատու, նա յանկարծ վերժուաւ և «ժամանակ է» ասելով, պատրաստվեց գնալու: Նրանք կառք նստան: Պարզ լուսնակ գիշեր էր փողոցները այնպէս պայծառ էին, կարծես իւրաքանչիւր քայլում կը լինէր լինելու վառած: Անցնողը կարող էր կատարեալ լուսութիւն էր տիկինը քաղաքում երեկոյն միայն կառքի դրոյոցը կամ քաղաքապահները:

ստացանք 10 ռուբլի յօդուտ Բաթմի յիշատակին զրվելի մահարձանի: Այդ փողը հանդանակել են իրանց մէջ 9 հոգի Արդահանի բնակիչներին:

ՆՈՐ-ՆԱՍԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են: Ուրբաթ, 23-ին սեպտեմբերի, Բաթմի Պատկանեան ուղևորվում է թիֆլիս, նրա զլիաւոր նպատակն է նուիրել կաթողիկոսին այն դեղեցիկ և թանգարդին ընծաները, որ նա ստացաւ իր յօբելեանի առթիւ Գարիլի հայ ուսանողութիւնից և Կ. Պօլսի հասարակութիւնից: Բանաստեղծի կամքին համեմատ այդ ընծաները պիտի պահվեն Էջմիածնի թանգարանում:

ՆՈՐ-ՆԱՍԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են: «Գուցէ ոչ մի տեղ մանուկների կրթութիւնը այնպիսի վատթար դրութեան մէջ չէ, որքան Նոր-Նախիջևանում: Այստեղի երեխաների մեծ մասը փողոցի զաւակներ են, առաւօտից մինչև երեկոյ նրանք փողոցում են և այդտեղ են անում իրանց շարութիւնները, և ինչպիսի անձամ չարութիւններ, օրինակ անցնողի վրա քարեր են արձակում, թոյլ աղաներին ծեծում, կատուններին ու ձագերին խեղդում, տներին ապակիները կտրատում են և այլն: Մի խօսքով այստեղի մանուկները պէս երես առաւ, անկիրթ մանուկներ ուրիշ տեղ թիչ կը պատահէք: Հայրերը և մայրերը, փոխանակ չար երեխաներին նախատելու, իբրատելու, միշտ զոհ են, որ երեխաները դուրսն են և իրանք աղատ են նրանց վրա վերահսկելու հոգովը»:

Մենք արդէն հաղորդել էինք մեր ընկերներին, որ ԱՐԳԱՆՆԻՑ և նրա շրջակայքում սեպտեմբերի 17-ից մինչև 20-ը անդադար երկրաբաժի հարուածներ էին լինում: Քաղաքում մի քանի պատերը փլել են, բայց բաղաւորապէս ոչ ըզին յետա չէ հասել: Իսկ Գէօրա զաւառաբաժնի մի քանի զիւրկները տները քանդվելով, նրանք աւերակների տակ հասակ առած մարդիկ և երեխաներ սպանվել են:

Մեզ ուղարկված է հետեւեալ տպագրելու համար: «Չեր լրագրի № 105-ի մէջ տպած էր թիֆլիսի խարիւսի անուանված թատրում հայոց Բաթմի դերեզմանի ընկերութիւնից հիմնած նորաբաց արական ուսումնարանի մասին մի լուր, որտեղ յիշեալ ընկերութեանը խորհուրդ են տալիս, որ այդտեղ յաճախող եօթ թէ ութ հոգի աշակերտներին անցկացնեն այդ թատրում գտնված քաղաքային դպրոցը, իսկ այդ դպրոցը դարձնեն իգականի, պատճառ բերելով թէ խարիւսի թաղի բնակիչները ունենալով արդէն մի քաղաքային հայոց արական դպրոց, շատ ուրախ կը լինեն,

րի սուղոցի ձայնը խանգարում էին այդ լուսութիւնը և կրկին դադարում կառքը անցնում էր դասարկ փողոցներով: Տիկին Վարվարէն կեղևած էր կառքը մի անկիւնում: Նա ոչինչ չէր խօսում, կարծես մի ինչ օր բան լինէր վճռում իր մտքում: Լուռ էր և Շիրազեան: Որքան աւելի էր կառքը մօտնում նրանց տանը, այնքան տիկին Վարվարէն աւելի անհանգստութեան նշաններ էր անում: Նա երբեմն բարձրացնում էր դուրսը, կարծես կամենալով մի բան ասել, բայց կրկին դուրսը քաշ էր դրոյում ու լուռ,—կամ սկսում էր անհանգստութեամբ տեղումը շարժվել: Ահա մօտեցան տանը, կառքը կանգ առաւ: Այդտեղ միայն տիկին Վարվարէն դադարեց իր սաստիկ դողը և սրտի անուշապ բարբախտը: Նրանք իջան կառքը հեռացաւ: Նա մօտեցաւ դրան և կամեցաւ ձեռքը մօտեցնել էլէկտրական զանգակի դրօշակալին, բայց յանկարծ կանոնեց, նայեց Շիրազեանին մի քանի վայրկեան և արագ շուռ գալով հուփ տուեց զպայանակը: Լսվեցաւ զանգակի երբուն ձայնը: Տիկինը արվում էր: Անդադար դրոյը ցնցում էր նրա ամբողջ մարմինը: Նա սաստիկ լարված էր,—էլի մի վայրկեան, և դուրէ ուշաթափ նա գետնը դրոյվէր: Լսվեցաւ ծառայի ոտնաձայնը, կարծես մի բանից խայթված, ցատկեց Շիրազեանի մօտ և ուժգին սեղմելով նրա ձեռքը, բորբոքված ձայնով խօսեց.

—Պետեր, մի՞թէ չես դրոյում, որ ես քեզ սիրում եմ... Շիրազեան այս անակնկալ խոստովանութիւնից շփոթված, դեռ ուշքի չէր եկել, երբ ծառան բացեց դուռը, և տիկին Վարվարէն անգիտակցաբար, առանց յետ նայելու, սլացաւ մտաւ տուն:

(Կը շարունակվի)



Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՄՆԻՄՆՈՑ

(Կուկիա, վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամէն օր

Ա Ռ Ա Ռ Օ Տ Ն Ե Ր Ը

ՆԱԻԱՍԱՐԻՆՆԵՆ—9—11 ժ. վիրաբուժական (նոյնպէս և ատամնացաւի) և վներ. ց

ՐՈՒԿՈՎՎԱԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.

ՍՕՐՕԼԵՎ—11—12 ժ. ատամնաբոյժ.

ՏԱՐՍԱՑԻՉԷ—12—1 ժ. ամէն օր, բացի կիրակի. աչքացաւ.

ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի կանանց ց.

ԿԱՐԱՊԵՏԵՆԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի երեքշաբթի և ուրբաթ.

Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը

ԳԱԳՕՄՍԿԻ—5—6 1/2 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.

ՆԱԻԱՍԱՐԻՆՆԵՆ—6 1/2—7 1/2 ժ.

ՓՈՒՂԻՆԵԱՆ—6 1/2—7 1/2 ժ. ներքին և երեխայոց ց.

Հիւանդանոցում է մանկաբարձուհի Մ օ զ Ե Ր:

ՎՃԱՐ—50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԻՆՆԵՆ

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ԱՌԻՍՏՐԱՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՅԻ

ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԳԻՐՔ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Գինն է 3 ռուբլի, ճանապարհի ծախսը գնողի վրա է:

Միանուագ քսանից աւելի գնողին զիջումն կը լինի:

Վաճառվում է ԲԱՅԱՌԱՊԵՍ Խիդիկէի և ընկ. զբաղմունքում, Թիֆլիս, Գոյովինսկի Պրոսպեկտ, առաջին Գիմնազիայի հանդէպ: 2—40

ԱԶԳԱՑԱԻ ունեցողներին ընդունելութիւնը բժիշկ Բ Է Յ Ե Ր Ի մօտ, ամառվանից յետոյ, վերանորոգված է ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ Գրեթաբոլսկի փողոց, տուն Խարազովի, № 3

Ընդունելութիւնը ամէն օր, առաւօտեան 9—10 ժամ:

1—3 (Ե. Շ. Հ.)

ԱՌԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր  
ԵՕՐՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Առևտրողները ստանում են ատտեստատներ:

Աւանդելի-առարկայք սղքա են՝ 1) Առևտրական ճտեսութիւն, 2) Առևտրական թուղթագրութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուղթագրութիւն համբիջի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն, և 7) զեղազրութիւն:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 25-ից: Ընդունելութիւնները սեպտեմբերի 15-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սոյուզկում, Լաբորատորիայ փողոցի վրա, № 11: Իսկ օգոստոսի 20-ից Աղեքսանդր Փրիզմովի տանը, № 9 Սերգիեյևսկայա և Նազարնայա փողոցների անկիւնում, զեղատան դիմաց, ուր օր անցնելու են կուրսերը: Երազիրը ու կանոնները կարելի է ստանալ ՁՐԻԱՊԵՍ եղբ. Սոլիմանովների բանկային զբաղմունքում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք զիմում են կուրսերի հիմնողին.—Վ. Պ. Մանյուշանյու.

19—20 (Ե. Շ.)



ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ԳԵՐԱՊԱՏԻ ՀԱՅՐԵՐԻ ԷԼԻԿՍԻՐԸ

ՍՈՒԼԻԱԿ (GIRONDE) ԱՐԲԱՑՈՒԹԻՒՆԻՑ

Այդ էլիկսիրը հարել է 1373 թ-ին վանահայր ՊԵՏՐՈՍ ԲՈՒՐՍՕ:

Այդ էլիկսիրի մի քանի կաթիլները ամենօրեայ գործածութիւնը պահպանում է ատամները փշանալուց, տալիս է նրանց սպիտակութիւն, ամրացնում է լինդերը և թարմացնում է բերանը:

Բացի էլիկսիրից ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ հայրերը պատրաստում են զարձեայ ԱՍՄՆԱՓՕՇԻ և ՊԱՍՍԱ ատամներ սրբելու համար, որոնք նմանապէս կարելի է ձեռք բերել ամէն փոքրի շառէ նշանաւոր դեղատներում, ինչպէս և դեղատան ապրանքների պահեստներում ու պարֆյումերական մագաղաններում:

ԳԼԽԱՌՈՐ ԱԳԷՆՑ SEGUIN, BORDEAUX, rue CROIX de SEGUEY, №106. 29—30 (Շ.)

ԿԵՕԼԷՐԵԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԶՈՒՐ

անփոխարինելի միջոց սննեակի ճնշված օղբ օրծնացնելու և թարմացնելու համար: Ծախվում է զաւառներում բոլոր նշանաւոր վաճառականների մօտ: Ծախվում է—Բ. ԿԵՕԼԷՐԻ և ԸՆԿ. մօտ, Նիկոլայևայ փողոցում: № 8. Ս. Կ. Օ. (1—3)

Դուք եկաւ մամուլի տակից և վաճառվում է զբաղմունքներում Սահայ քահանայ Սահակեանի հետեւալ աշխատութիւնները: ա) ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ հին ուխտի 182 երես, գինն է 30 կօպ., բ) ԳԱՍԱԳԻՐԻ ԿՐՈՆԻ, ուղեցոյց հայ կրօնաւոյցների համար (հին ուխտի նիւթի մշակութիւնը) 494 երես, գինն է 1 ռ. 75 կօպ.: Վերջին գիրքը պարունակում է իր մէջ 14 պատկեր և 3 քարտէշ:

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕНОЕ  
Российское Общество Застрахованія капиталовъ и доходовъ  
УТВЕРЖД. ВЪ 1835 ГОДУ  
ԲԱՐՁՐԱԳՈՑՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ

Ռուսաց ընկերութիւն կապիտալների և եկամուտների ապահովութեան հիմնված 1835 թ-ին  
Ամենահին և միակ ուսաց ընկերութիւն, որը բացառապէս պարագում է կանքի (կապիտալների և եկամուտների) ապահովութեան գործով, փոխադարձութեան սկզբունքների վրա:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 8,000,000 ՐՈՒԲԼԻ

- 1. կապիտալների ապահովութիւնը ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ համար, ապահովացնողի մահուան դէպքում
- 2. կապիտալների ապահովութիւնը ԾԵՐՈՒԹԻՒՆԸ և երեխաների համար ԲԱԺԻՆԲԸ ապահովացնելու համար
- 3. եկամուտների և ցմահ նշանակվող ԹՈՇԱԿՆԵՐԻ ապահովութիւնը:  
Տարիները և մանրամասն տեղեկութիւնները ուղարկվում են անվարձ ԳԼԽԱՌՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ կողմից, որը գտնվում է Թիֆլիսում, Վերամիսովսկայա փողոց, տուն № 24.  
Գլխաւոր Աղէնտ և Տեսուչ Կովկասեան երկրի համար՝ Ն. Ն. ԳՐՈՒՁԷՆԲԵՐԳ:

ՊԱՀԱՆՁՎՈՒՄ ԵՆ ԱԳԷՆՏՆԵՐ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ  
Թիֆլիսի և կովկասեան ուրիշ քաղաքների համար: 21—32 (Հ)

ԿԵՐՈՍԻՆԻ ՊԱՀԵՍՏ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԴԷՊՕ ԼԱՄՊԱՆԵՐԻ ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ԵՒ ՄԷԲԷԼԻ

Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ

գտնվում է Վօլգայի մօտ, կասպիան-Սև-ծովի նաւթարդիւնազործական ընկերութեան պահեստում, նախկին Կարտվելովի

ԿԵՐՈՍԻՆԻ ԵՒ ՄԱՋՈՒՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ  
25—25 (Հ)

Н Э М Е Ц К А Я Г О С Т И Н Н И Ц А  
ВЪ ВАРШАВѢ  
31. Длугая улица 31.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՐԱՆՈՑ

ՎԱՐՇԱՎԱՑՈՒՄ, Կուրսայ փողոց, 31. Գտնվում է քաղաքի նոյն իսկ ԱՌԵՏՐԱԿԱՆ կենտրոնում, ԹԱՏՐՈՆԵՐԻ և բոլոր ՊԱՇՏՈՆԱՑՆԵՐԻ կողքին: 90 սննեակներ, շքեղ կերպով յարմարեցրած, 30 կօպէկից մինչև 3 ռուբլի օրական վարձով:

ԿՕՆԴԻՏԷՐԻԱ և ՐԷՍՕՐԱՆ

ձաշեր 30 կօպէկից մինչև 1 ռուբլի:  
ՕՍԵՒԲՈՒՆԵՐ և ԿԱՌՔԵՐ երկաթուղու բոլոր գնացքների համար:  
ԿԱՌՔԵՐԻ վարձը չափաւոր գներով: (Հ)

ЗУБНЫЯ СРЕДСТВА А. ШТЕХЕРЪ  
ПОДОЛЬСКІЯ ЗУБНЫЯ КАПЛИ  
КОРОВКА 50 И 80 К.  
ГИГИЕНИЧЕСКІЙ КОКАИНОВЫЙ  
ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ  
БОЛЬШ. ФЛАКОНЪ 80 К.  
ГИГИЕНИЧЕСКІЙ ЗУБН. ПОРОШОКЪ  
КОРОВКА 30 К.  
СМЛАДЪ ВО ВСѢХЪ АПТЕКАХЪ И АПТЕК. МАГАЗ.

ԳՐՈՎԻՉՈՐ Ա. ՇՏԷԻՒԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ  
ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԷՄ  
ՊՕԴՈՒԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻՆԵՐ 80 ԿՈՊ.  
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄՆՈՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ  
ՄԻՐ 80 ԿՈՊ.  
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆՈՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՌՈՐ ՊԱՀԵՍՏ. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ կովկասեան դեղավաճառատան, և պ. պ. Շահպարտեանցի, Մակիկէրի, Սէնչիկովսկու և Ազմուրովի դեղատներում: ԲԱԳՈՒԻ մէջ Բէիկէրի մօտ, ԲՈՒԹԱՑԻՍՈՒՄ՝ Կօկօշեկի մօտ, ՍՍԱՎՐՈՊՈՂՈՒՄ Բրօսնոցի մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՕԳԱՐՈՒՄ: (Հ.)

ԻԳԱԿԱՆ ԿԵՐԱԿԵԱՑ ՁՐԻԱՌՇԱԿ ԴՊՐՈՑՈՒՄ (հասակաւորների և երեխաների համար, 10 տարեկանից ոչ պակաս) ուսուցանում են կարգալ, գրել և հաշուել հայոց ուսուցաց և վրաց լեզուներով: Ընդունելութիւնը կը լինի ամենայն կիրակի: Պարագ մուշքը տեւում է 12 ժամից մինչև ժամի 3-ը:  
Դպրոցը գտնվում է Չալչալվաձեկի փողոցում, Ֆեդորէնկօի տանը, քաղաքային Արհեստաւորաց իգական դպրոցի շինութեան մէջ: 3—3 (Շ.)